<< Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3- րդ մասի 10-րդ կետի (տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը) պահանջի վերաբերյալ

Տեղեկացվում է

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը տնօրինում է Գեղարքունիքի մարզպետի գործունեությանը, մարզպետի աշխատակազմի , մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի և ստորաբաժանումների, ինչպես նաև մարզային ենթակայությամբ գործող կրթական, մշակութային և առողջապահական կազմակերպությանունների գործունեությանը վերաբերող տեղեկություններին: Նշված տեղեկությունները մշակվում են Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից և պահպանվում նույն ստորաբաժանումներում, քարտուղարության ընդհանուր բաժնում կամ համապատասխան պաշտոնատար անձի պաշտոնական փաստաթղթերում և “Mulberry” համակարգում: Հրապարակման ենթակա տեղեկությունները տեղադրվում են նաև ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական (gegharkunik.mtad.am) կայքէջում: